Տեղեկանք գործող Օրենքում լրացում կատարելու վերաբերյալ

Հոդված 13. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտը և պաշտպանական գոտիները

1. Ավտոմոբիլային ճանապարհներն ունեն օտարման շերտ, իսկ բնակավայրերից դուրս գտնվող վայրերում՝ նաև պաշտպանական գոտիներ: Օտարման շերտի չափերը հաշվարկվում են շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների չափերը, հաշված ճանապարհի առանցքից, սահմանվում են՝

ա) 1-ին կարգի ճանապարհների համար՝ 70 մետր.

բ) 2-րդ և 3-րդ կարգի ճանապարհների համար՝ 50 մետր.

գ) 4-րդ կարգի ճանապարհների համար՝ 30 մետր:

3. Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները չպետք է խոչընդոտեն պաշտպանական գոտու մելիորատիվ համակարգի և կառուցվածքների անխափան գործունեությանը կամ չպետք է սահմանափակեն դրանց առավելագույն հաշվարկային թողունակությունը, կանոնավոր գործունեությունը և հիդրոլոգիական ռեժիմը:

4. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերի հողերը գտնվում են պետական ճանապարհային մարմնի, իսկ ընդհանուր օգտագործման ոչ պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերի հողերը՝ ավտոմոբիլային ճանապարհների սեփականատերերի տնօրինության տակ:

5. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների հողերը գտնվում են հողի սեփականատերերի տնօրինության տակ:

6. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում, առանց այդ ճանապարհները տնօրինողների և շահագրգիռ այլ մարմինների հետ համաձայնեցնելու, արգելվում են՝

ա) կառուցել շենքեր, կառույցներ, ինժեներական հաղորդակցումներ, կատարել լեռնահետազոտական և արդյունահանման աշխատանքներ.

բ) կատարել անտառահատում և վնասել հողածածկույթը.

գ) իրականացնել այնպիսի աշխատանքներ, որոնց հետևանքով պաշտպանական գոտիների հողերում կարող են առաջանալ հիդրոլոգիական ռեժիմի անբարենպաստ փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունության խախտում (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում).

դ) տեղադրել ճանապարհային երթևեկությանը չվերաբերող նշաններ, ցուցանակներ, կատարել ճանապարհային տեսանելիությունը խանգարող ծառատնկումներ և լուսավորություն:

6.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երթևեկելի մասի եզրից՝ մինչև 200 մետր հեռավորության վրա գտնվող շենքերում կամ շինություններում, որոնք չեն համապատասխանում՝ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության, սպասարկման, պահպանման և օգտվելու համար ներկայացվող սահմանափակումներին, պայմաններին և պահանջներին, արգելվում է սգո սրահի՝ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար թույլտվության տրամադրումը:

Սույն մասով սահմանված դրույթների կիրառման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

7. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտի սահմաններում օրենքով սահմանված կարգով աշխատանքներ կատարող կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք պատասխանատու են համաձայնեցված տեխնոլոգիայի, կատարման ժամկետների պահպանման, աշխատանքների կատարման գոտում և ժամանակավոր շրջանցներում կամ ելքերում ճանապարհային երթևեկության անվտանգության պահպանման համար: Նրանք պարտավոր են աշխատանքները ավարտելուց հետո անհապաղ վերականգնել աշխատանքների կատարման հետևանքով վնասված ճանապարհի հողապաստառը, ճանապարհային կահավորանքը, տեխնոլոգիական կապն ու կանաչ տնկիները, հավաքել և հեռացնել ավելորդ հողը, աղբը, չօգտագործված նյութերն ու կառուցվածքները: